թամարի կը յաջողի Էջմիածնի իրաւունքները պաշտպանել, միաժամանակ և յետագային զարկ կու տայ պարսկական բաժնի այլեւայլ վանքերուն։ Այսպէս Մուղնիի վանքը իր նիւթական և բարոյական օժանդակութեամբ կը շինուի, Ցովհաննավանքը աւելի կը շքեղանայ և միաբաններով կը ծաղկի, Նոր Ջուղայի Ամենափրկիչ Վանքը իր հոգածութեան առարկայ կ՚ըլլայ, Խորվիրապի և Սանահինի վանքերը կը նորոգուին (4)։

1660 Սեպտեմբեր 4ին, կոնդակով մը Նոր—Ջուղայի Ամենափրկիչ Վանքին կը վերադարձնէ անկէ կանխաւ անջատուած շրջանները, բաժանումէն առաջ եկած երկպառակութեան վերջ տալու համար։ Այս կոնդակը հրատարակեց Պր. Ց. Քիւրտեան «Հասկ»ի 1952ի Փետրուարի թուին մէջ։ Զայն կ՚արտատպենք.

«Ց[իսուս]ի Ք[րիստոս]ի ծառայ Ցակոբ կթղկս. Հայոց և Պատրիարք Վաղարշապատու երկնահանգէտ և ատենասարսափ լուսանկար և քանկար Սբ. Աթոռոյս Էջմիածնի, յորմէ ժամանեալ հասցէ գիր ա-

---

(4) Մ. Խ. Ցակոբ Կաթողիկոս Ջուղայեցի, Արարատ Լ.Զ. Տարի, 1902, Սեպտ.—Հոկտ. համար Թ—Ժ, էջ 779։

Ց. Քիւրտեան, Նիւթեր Ցակոբ Ջուղայեցի Կաթողիկոսի կենսագրութեան համար, Հասկ, ԻԱ. Տարի, 1952, Մարտ—Ապրիլ էջ 87։